տօնել էր այդ անբարոյականութիւնը, այժմ բարեբախտաբար մեկնել էր Մոսկուա. թող նրա տեղապահ ընկեր Սաքանազը, որը պատասխանատու է ժողովրդեան կրթութեան բոլոր հարցերին, անմիջական միջոցներ առնի...

Ամէն կողմից՝ բարձրագոյն հրամանով՝ գանգատներ, բողոքներ, մատնութիւններ տեղացին:

Խողը անկետային թղթի վրայ արձանագրուած չէր:

Ցայտնի չէր, թէ 1917-ից առաջ ո՞ւր է ապրել, հակայեղափոխական շարժումին մասնակցե՞լ է թէ չէ, իր հայրը ի՞նչ գործով էր զբաղւում, սեփականութեան տէ՞ր է թէ ոչ, որեւէ կուսակցութեան պատկանե՞լ է, ճերմակ բանակի մէջ ծառայե՞լ է, դեղաշիի մէջ արձանագրուա՞ծ է...

Խողը միանգամայն կասկածելի էր: Իր սենեակում փակուած ոչ մէկի հետ հաղորդակցութեան մէջ չէր մտնում: Կասկած չկար, որ հակայեղափոխական դիտումներ ունէր, բուրժուական զզուելի մտայնութիւն, արուեստը արուեստի համար գաղափարը պաշտպանող արտիստ, մուսաֆատիստ, մենշեւիկ կամ դաշնակ:

Զեկայի անդամներից մէկը պատի ծակից դիտել է, որ խողը գետինը ընկած կարմիր թղթի վրայ միզել է...

Բռնե՛լ, բանտարկե՛լ, գնդակահարե՛լ:

Հարցը դրուեց կոմիսարների ժողովի առջեւ:

Լուսժողկոմ Պառաւեանը, փոքրիկ, տգէտ, գոռող եւ նախանձոտ մարդուկ, ակնոցները ուղղեց, թուքը կուլ տուաւ եւ ճառեց: Պէտք է վերջ դնել այդ խայտառակութեան...

«Այդ խողը, ընկերներ — ասաց նա — դարձել է մի տեսակ մղձաւանջ, նա խանգարում է Խորհրդային Հանրապետութեան խաղաղ շինարարական կեանքին, նա ստեղծում է վտանգաւոր մտայնութիւն»:

Ու կոմիսարը մէջ բերաւ «դիտական» պատճառաբանութիւններ:

Տնտեսական.— Խողի պատճառով Պետական Թատրոնը դատարկ է: Այդ մասին թատրոնի վարիչ ընկ. Մամիկոնը ներկայացրել է զեկուցում: Ո՞վ պիտի վճարի տարուայ վերջին: Ու թողնենք այդ. ժողովուրդը իր դրամները տուրք վճարելու տեղ, Գերմանիայի յեղափոխութեան նպաստելու տեղ՝ մսիում է կրկէսում: Ու թողնենք այդ. խողը ահագին ռոճիկ է ստանում, կոմիսարների հաւասար ռոճիկ:

Քաղաքական.— Ո՞վ է այդ խողը, ի՞նչ է նրա նպատակը, ինչո՞ւ կուսակցութեան մէջ մինչեւ հիմա մտած չէ: Զեկայի տեղեկութիւնները շատ բացորոշ են... Անպատկառօրէն միզել է կարմիր թղթի վրայ...(այստեղ կոմիսարը ակնոցները նորից ուղղեց եւ երկարօրէն յառեց ընկերներին): Ես կարծում եմ, որ այդ խողը բերել են Հայաստան շատ մութ նպատակներով: Պա՛րզ է:

Բարոյական.— Անբարոյականութի՛ւն է: Զորստանի, զզուելի եւ բուրժուական այդ արտիստը պրոլետարական բանաստեղծութեան ընկերակից իսկ չէ, փտած կապիտալիստական ռեժիմի արդիւնք՝ նա մեր աղբի հոտը չի կարողանում տանել, մեր ցեխի առջեւ քիթը տըրորում է... Նրա ազդեցութիւնը ժողովրդական լայն մասսաների վրայ օրէ օր մեծանում է: Անբարոյականութիւնը այն աստիճան հասած է, որ անցեալ գիշեր Համալսարանի դրականութեան մի դասախօս իր դաւակների հետ գնացել է ցիրկ...

— Հո՛ւպ տալ, հո՛ւպ տալ,— բացականչեցին կոմիսարները:

— Դա ջոկ հարց է,— շարունակեց Լուսժողկոմը, առայժմ որոշում տանք խողի մասին...

Հողժողկոմը փորձեց փոքրիկ պաշտպանութիւն: Նախագահը երբ վերադառնայ՝ կարող է բարկանալ... Դէ, ազգեր, խողը խոզ է էլի, նեպային դրութիւն... արտասահմանը ինչ կ'ասի... Ուզո՞ւմ էք՝ ղրկենք գիւղ...

Ընկեր Սաքոն կոմիսարների ուշադրութիւնը հրաւիրեց ուրիշ մի կարեւոր հանգամանքի վրայ. «Մեր թուրք եղբայրակիցները ի՞նչ պիտի մտածեն...հարեւան տաճիկ պետութիւնը կարող է կասկածել... Նրանք չեն սիրում խոզերին. նրանց կրօնական զգացումը կարող է վերջապէս վիրաւորուել... Մտածե՞լ էք այդ մասին»:

Այդ կէտի վրայ ոչ ոք չհակառաջարկեց, եւ

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան